Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
հունիսի 18-ի N 1021 - Լ որոշման

«Հավելված
Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման,
պահպանման, վերարտադրման,
բնականոն զարգացման և օգտագործման
2020 թվականի տարեկան ծրագրի

ՍԵՎԱՆԱ ԼՃՈՒՄ ՁԿԱՆ ԵՎ ԽԵՑԳԵՏՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՍԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՍԻ ՈՐԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

| NN ը/կ | Ձկան տեսակը | Ձկնորսության թույլատրելի առավել քանակությունը (տոննա) | Ձկնորսության համար թույլատրելի քաշը միավորի համար (գրամ) | Ձվադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|
| 1. | Սիգ | 200 | 500 գրամից ոչ պակաս | դեկտեմբեր-հունվար |
| 2. | 2020 թվականի համար Սևանա լճում կարաս և խեցգետին կենդանատեսակների համար արդյունագործական որսի չափաքանակ չի սահմանվել: | | | |
| **Ընդհանուր պահանջներ** | | | | |
| 3. | Սիգ ձկնատեսակի որսն իրականացվում է Մեծ Սևանի ամբողջ տարածքով, ափից առնվազն 500 մ հեռավորության վրա: | | | |
| 4. | Սիգի արդյունագործական որսն իրականացվում է դոնվի ցանցերով (ցանցավանդակի կառուցողական քայլի չափը 40 մմ և ավելի): | | | |
| 5. | Արգելվում է որսն իրականացնել հանգուցային, արտադրված մեքենայական կամ ձեռքի միջոցով, սինթետիկ նեյլոնե կամ այլ պոլիամիդային մանրաթելերից, թելի տրամագիծը 0.5 մմ-ից պակաս և ցանցավանդակի չափը 80 մմ-ից պակաս (ցանցավանդակի կառուցողական քայլի չափը 40 մմ-ից պակաս) ձկնորսական ուռկաններով (ցանցեր): | | | |
| 6. | Արգելվում է Սևանա լճում արդյունագործական որսը սույն հավելվածի 1-ին կետերով չսահմանված կենդանատեսակների նկատմամբ: | | | |

7. Սևանա լճում կենդանական պաշարների օգտագործման մասին պայմանագրերի գործողության ժամկետ սահմանել 2020 թվականի մարտի 15-ից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 1-ը՝ հաշվի առնելով իշխան և սիգ ձկնատեսակների ձվադրման ժամանակահատվածը՝ ձկների բնական վերարտադրությունն ապահովելու նպատակով:

8. Արդյունագործական որս իրականացնելու նպատակով Սևանա լիճ լողամիջոցների մուտքն ու ելքը պետք է իրականացվեն ստորև նշված տեղամասերից (կից քարտեզ-սխեմա).

| Մուտքի կետի համար | «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղեր | Մասնաճյուղի տեղամաս | Տեղադիրք | Աշխարհագրական կոորդինատներ | |
|---|---|---|---|---|---|
| ՓՈՔՐ ՍԵՎԱՆ | | | | | |
| 1) | Արտանիշ | Դրախտիկ տեղամաս | Սևան-Ճամբարակ, մայրուղու 26 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 400 մ | 40$^{0}$32'33.03"C | 45$^{0}$12'32.13"B |
| 2) | Սևան, | Ախթամարի տեղամաս | Սևան-Ճամբարակ, մայրուղու 14 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 55 մ | 40$^{0}$35'47.62"C | 45$^{0}$5'43.67"B |
| 3) | Սևան | Ախթամարի տեղամաս | Սևան-Ճամբարակ, մայրուղու 1.1 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 1 կմ | 40$^{0}$36'13.39"C | 44$^{0}$58'14.56"B |
| 4) | Սևան | Ախթամարի տեղամաս | Թերակղզու հյուսիսային ափ, մայրուղուց մինչև լիճ՝ 800 մ | 40$^{0}$34'056"C | 45$^{0}$0'29.42"B |
| 5) | Սևան | Սևանի տեղամաս | Սևան-Վարդենիս, մայրուղու 10 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 600 մ | 40$^{0}$30'47.75"C | 45$^{0}$1'43.74"B |
| 6) | Նորատուս | Այրիվանի տեղամաս | Սևան-Վարդենիս մայրուղու 21 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 450 մ | 40$^{0}$26'44.90"C | 45$^{0}$6'46.04"B |
| 7) | Նորատուս | Նորատուսի տեղամաս | Նորատուսի հրվանդան, մայրուղուց մինչև լիճ՝ 10 կմ | 40$^{0}$25'52.38"C | 45$^{0}$12'58.08"B |
| ՄԵԾ ՍԵՎԱՆ | | | | | |
| 8) | Նորատուս | Նորատուսի տեղամաս | Սևան-Վարդենիս մայրուղու 38.1 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 500 մ | 40$^{0}$19'45.17"C | 45$^{0}$13'4.32"B |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 9) | Նորատուս | Նորատուսի տեղամաս | Սևան-Վարդենիս մայրուղու 47 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 2 կմ | 40$^{0}$14'53.32"C | 45$^{0}$13'14.10"B |
| | 10) | Մարտունի | Երանոսի տեղամաս | Սևան-Վարդենիս մայրուղու 52 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 2 կմ | 40$^{0}$12'46.89"C | 45$^{0}$14'4.18"B |
| | 11) | Վարդենիկ | Վարդենիկի տեղամաս | Սևան-Վարդենիս մայրուղու 61 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 2.5 կմ | 40$^{0}$10'17.19"C | 45$^{0}$17'4.04"B |
| | 12) | Վարդենիկ | Վարդենիկի տեղամաս | Սևան-Վարդենիս մայրուղու 69 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 1.0 կմ | 40$^{0}$9'10.20"C | 45$^{0}$22'30.12"B |
| | 13) | Վարդենիկ | Ծովինարի տեղամաս | Սևան-Վարդենիս մայրուղու 80 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 50 մ | 40$^{0}$9'37.59"C | 45$^{0}$29'44.64"B |
| | 14) | Վարդենիս | Վարդենիս տեղամաս | Սևան-Վարդենիս մայրուղու 91 կմ, մայրուղուց մինչև լիճ՝ 20 մ | 40$^{0}$11'29.75"C | 45$^{0}$37'20.86"B |
| | 15) | Վարդենիս | Արեգունի տեղամաս | Մայրուղու և գյուղի ճանապարհի խաչմերուկից դեպի լիճ՝ 1.8 կմ | 40$^{0}$19'24.02"C | 45$^{0}$35'41.09"B |
| | 16) | Արնիկ | Փամբակ տեղամաս | Մայրուղու և գյուղի ճանապարհի խաչմերուկից դեպի լիճ՝ 400 մ | 40$^{0}$22'2.55"C | 45$^{0}$31'56.85"B |
| | 17) | Արտանիշ | Արտանիշի տեղամաս | Մայրուղու և գյուղի ճանապարհի խաչմերուկից դեպի լիճ՝ 300 մ | 40$^{0}$27'21.93"C | 45$^{0}$25'9.35"B |
| 9. | Արգելվում է ձկների արդյունագործական որսն իրականացնելու նպատակով Սևանա լիճ մուտք և ելք գործել լողամիջոցների համար սահմանված մուտքի և ելքի տեղամասերից դուրս տարածքներից: | | | | | |
| 10. | Սևանա լճում ձկների արդյունագործական որսն իրականացվում է օրվա լուսային ժամերին: | | | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Քարտեզ-սխեմա




»: